նախաւ քան զնզլխազար, եւ զայս սովորութիւն անխախտ պահեալ Պատրիարքաց Ս. Աթոռոյս տեւէ մինչեւ ցայսօր. իսկ պատրիարգական Պերաթն Սարգսի ընդ այլ բազմաթիւ հրովարտակաց չերեւի այժմ 'ի միջի :

Մինչդեռ Կաթուղիկոսք և Թագաւորք Հայոց յարեալ 'ի Պապական եկեղեցին եւ խառնեալ իսկ 'ի սնոտի խոստմանց պաշտօնէից նորին, որոց բազմիցս զփորձ առեալ էին, եւ տակաւին պատուար ամրութեան դնէին զնոսա խարխալեալ քաղաքական վիճակի իւրեանց, յուղէին տարապարտ կրօնական վէճս և խնդիրս, և զբաղեալ էին դումարել ժողովս ոչ 'ի շինութիւն, այլ յերկպառակութիւն և 'ի խռովութիւն եկեղեցւոյ և պաշտօնէից նորին. եւ 'ի զարթուցանել զօտար թշնամիս 'ի վերայ ինքեանց յեղծումն եւ յապականութիւն աշխարհին և 'ի կորուստ անձանց, որպէս և եղեւ իսկ : Աստի առիթ առեալ Թերեւս Թագաւորն Վրաց, առաքեաց դեսպանս առ Սուլթանն Եգիպտոսի Մէլիք Եուսուֆ, եւ խնդրեաց 'ի նմանէ առնուլ 'ի ձեռաց Հայոց զվանս Ս. Յակոբայ յԵրուսաղէմ, և տալ Վրաց. քանզի գիտէր թէ Թագաւորն Օշին վասն արհամարհանաց իւրոց, չլինի ձեռնտու Սարգսի : Այդ եղեւ Պատրիարգին Հայոց դաւաճանութիւն Վրաց և յափշտակումն հայրենի վիճակին իւրոյ, որոյ վասն աճապարեալ էառ հանրագիր բազմակնիք 'ի դատաւորէ քաղաքին և յերեւելի այլազգեաց, եւ վճիռս 'ի դենպետաց, էառ ընդ իւր նաեւ զառաջին հրովարտակս, զորս տուեալ էին Սուլթանք Եգիպտոսի և նոքօք փութայ 'ի Գահիրէ, եւ յանդիման լեալ մեծի ատենի, առաջի արար նոցա զգըրեանս, և յայտնի եցոյց զիրաւունս ազգին իւրոյ : Ապա եհարց Սուլթանն ցդեսպանն, թէ ունի՞ք ըստ օրինակի Հայոց զայնպիսի գրեանս եւ զվաղեմի հրովարտակս 'ի հաստատութիւն իրաւանց ձերոց : Եւ պատասխանի դեսպանն թէ, չունիմք. այլ միայն խնդրէ Թագաւորն մեր առնուլ 'ի ձեռաց Հայոց զՍ. Յակոբ, և տալ Վրաց : Զունիմք ասէ Սուլթանն զայդպիսի օրէնս յաշխարհի մերում առանց հաստատուն գրոց բռնի կորզել զիրաւունս ուրուք և տալ այլոց. զի յայտնապէս տեսանի 'ի վաւերական գիրս 'ի ձեռս Հայոց, թէ վանքն այն սեփհական կա-